ՈՐՈՇ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներածություն

Տարածքային միավորների (ավելի ստույգ՝ վարչատարածքային միավորներ) համացանցային կայքերի գործունեության մոնիտորինգը բավականին բարդ աշխատանք է, և տարածաշրջանային մասնաճյուղերի աշխատակիցներից կպահանջվի նոր գիտելիքների և հմտությունների յուրացում:

Սախարովի կենտրոնի աշխատակիցները, որոնք ընդգրկված են այս աշխատանքում, պետք ունենան որոշակի գիտելիքներ իրավագիտության, համակարգային տեխնիկայի (ինժեներիա) և սոցիոլոգիայի բնագավառում:

Այս առումով և հաշվի առնելով սեղմ ժամկետները, դուք պետք է հնարավորինս լիարժեք օգտագործեք համապատասխան մասնագիտացված հասարակական կառույցների և առանձին փորձագետների մեթոդոլոգիական և մեթոդական օգնությունը, որոնք իրենց գործնական խորհուրդներով և խորհրդատվությամբ անգնահատելի ներդրում կունենան ձեր աշխատանքում:

Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում եմ մշակել խրախուսման բարոյահոգեբանական համակարգ (շատ եմ ցավում, որ չունենք ֆինանսական խրախուսման հնարավորություն), արժանիներին դիպլոմներով, լրատվամիջոցներում ելույթներով, շնորհակալագրերով և այլ ձևով պարգևատրելու համար:

Հաշվի առնելով, որ իրականացվող մոնիտորինգը շատ ժամանակատար միջոցառում է, նպատակահարմար եմ գտնում պաշտպանել Շիրակի մասնաճյուղի ղեկավարի՝ սույն աշխատանքի փուլային (բայց շարունակական) կատարման մասին առաջարկը:

Առաջարկում եմ աշխատանքի յուրաքանչյուր փուլ ավարտել միջանկյալ, սակայն բավականաչափ ամբողջական զեկույցով, որը հիմք կհանդիսանա հանրային քննարկումների անցկացման, համապատասխան առաջարկությունների մշակման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական կառավարման տեղական մարմիններին և Հանրապետության կենտրոնական մարմիններին ուղղված դիմումներ և առաջարկություններ ներկայացնելու համար:

Հարկ է նշել, որ Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղն արդեն բավականաչափ ծավալուն աշխատանք է կատարել պետական կառավարման և տեղական

ինքնակառավարման մարմինների համացանցային կայքերի որակական հատկանիշների սահմանման ուղղությամբ: Սա նրանց շատ արժեքավոր աշխատանքն է և այն որոշակիորեն կարող է հիմք հանդիսանալ մեր գործունեության համար:

Հարգելի գործընկերներ, մենք այս աշխատանքը երեք մարզերում պետք է իրականացնենք միևնույն տեխնոլոգիայով, սակայն հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները:

Օգտագործվող հասկացություններ

Վարչատարածքային միավորներ	- մարզ (պետական կառավարման տարածքային մարմին)
	- ՏԻՄ (գյուղական համայնքի կառավարման մարմին. այն ներառում է գործադիր իշխանությունը համայնքային մակարդակում և ավագանին)
	Կառավարման մունիցիպալ(քաղաքային) մարմին (քաղաքային համայնքի կառավարման մարմին, որի մեջ մտնում են գործադիր իշխանությունը և քաղաքի ավագանին)
	- տեղական ինքնակազմակերպված միավորումները, որոնք միավորում են մի շարք համայնքային միավորներ՝ համապատասխան վարչական սահմաններում սոցիալ-կենցաղային և բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով
Համացանցային կայքի կառուցվածքը	- համացանցային կայքի ֆունկցիոնալ սխեման, որն արտացոլում է միայն վարչատարածքային միավորի կառավարման (ինքնակառավարման) մարմնի խնդիրները և գործառույթները
Նորմատիվային պահանջներ	- կառավարման վերադաս մարմինների օրենսդրական ակտերով և որոշումներով, ինչպես նաև ՏԻՄ-երի նորմատիվային բնույթ ունեցող որոշումներով սահմանված պահանջները

Մոնիտորինգի իրականացման հերթականությունը[1]

1. Անհրաժեշտ է իրականացնել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2015 թ. ապրիլի 8-ի №280-Ա հրամանի կառուցվածքային և բովանդակային փորձաքննություն:

1.1. Կազմել փորձագետների ցանկ և նախապատրաստել նամակ համապատասխան կազմակերպություններին՝ խնդրելով օգնել իրականացնելու այդ փորձաքննությունը (որքան շատ լինեն փորձագետները, այնքան գնահատականն ավելի ստույգ կլինի):

1.1.1. Փորձագետները կարող են լինել ինչպես համացանցային կայքերի ստեղծման և շահագործման պրոֆեսիոնալներ, այնպես էլ մասնագետ-կառավարիչներ, որոնք պետք է գնահատեն Նախարարության այս հրամանի «անհրաժեշտ ու բավարար» լինելը, որպեսզի համապատասխան վարչատարածքային միավորի ղեկավարը սկսի աշխատանքները իր համացանցային կայքի ստեղծման և շահագործման համար:

1.1.2. Վերոնշյալի (ենթակետ 1.1.1.) հետ մեկտեղ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք գոյություն ունեն կադրային ապահովության տիպարային (ստանդարտ) պահանջներ վարչատարածքային միավորների համացանցային կայքերի ներդրման, սպասարկման և վարման համար (այսինքն՝ տեխնոլոգիական սխեմա):

2. Անհրաժեշտ է յուրաքանչյուր մարզի համար սահմանել գրանցված համացանցային կայքերի ցանկ 01.09.2015 թ. դրությամբ, անկախ այն բանից դրանք գործում են, թե ոչ:

2.1. Անհրաժեշտ է պարզել համապատասխան մարզպետարաններում, թե արդյոք գոյություն ունեն ստանդարտ պահանջներ վարչատարածքայի միավորների տիպարային համացանցային կայքերի ստեղծման համար: Արդյոք Նախարարությունը կենտրոնացված ձևով առաջարկել է մարզպետարաններին համացանցային կայքի ծրագրավորողի թեկնածություն, թե այս խնդիրը տվյալ մարզպետարանի իրավասությունն է, և այդ դեպքում, ով է (անձամբ) համացանցային կայքի պատվիրատուն և ծրագրավորողը:

2.2. Այն դեպքում, եթե Նախարարության կողմից կենտրոնացված ֆինանսավորում չի եղել տարբեր ՏԻՄ-երի համար համապատասխան համացանցային կայքեր ստեղծելու աշխատանքների համար, ապա ի՞նչ ֆինանսական միջոցներով են իրականացվել այդ աշխատանքները:

2.3. Ի՞նչ ֆունկցիոնալ տարբերություններ կան տարբեր տեղական վարչական միավորների համացանցային կայքերի միջև:

[1] Աշխատանքների առաջարկվող հերթականությունը որոշակի չափով կարող է ճշգրտվել:

2.4. Համացանցային կայքերը ըստ «որակական» հատկանիշների կարգավորելու նպատակով առաջարկում եմ յուրաքանչյուր մարզի համար իրականացնել գրանցված կայքերի խմբավորում:

Խմբերը կարող են լինել երեք տեսակի.

- Լավ աշխատող համացանցային կայքեր, որոնք ամբողջությամբ արտացոլում են տեղական վարչատարածքային միավորների գործունեությունը, առնվազն 2015 թ. ապրիլ-սեպտեմբեր ժամանակահատվածի համար:
- Բավարար աշխատող համացանցային կայքեր, որոնք արտացոլում են «անհրաժեշտ» բայց ոչ «բավարար» տեղեկատվություն:
- Վատ աշխատող կայքեր. այս խմբում ներառվում են բոլոր այն կայքերը, որոնք գրանցված են, սակայն չեն գործում:

Համացանցային կայքերի խմբավորման համար անհրաժեշտ է մշակել չափանիշների/չափորոշիչների համակարգ: Այս աշխատանքը, հիմնականում, իրականացվել է Գեղարքունիքի մասնաճյուղի կողմից:

Ձեզ անհրաժեշտ է միասին լրացնել չափորոշիչների այս ցուցակը, հիմք ընդունելով հետևյալ օրենքների պահանջները.

- «Տեղական ինքնակառավարում»
- «Տեղեկատվության ազատություն»
- «Համայնքային ծառայության մասին»
- «Անհատական տվյալների պաշտպանություն»
- «Հարկեր»
- «Տեղական բյուջեի մասին»
- «Հողային օրենսգիրք»
- «Առողջապահության մասին»
- «Բնակչության կենսաթոշակային ապահովության մասին»
- «Կրթության մասին»
- Եվ այլն:

Երբ կարողանաք առանձնացնել համապատասխան չափորոշիչները (այսինքն այն գործառույթները, որոնք օրենսդրորեն դրված են տեղական վարչատարածքային միավորների մարմինների վրա), այդ ժամանակ հնարավոր կլինի մշակել բալային աղյուսակ, ըստ որի կարելի է գնահատել համացանցային կայքի «էջերում» տվյալ գործառույթի արտացոլման մակարդակը:

Ենթադրենք մենք կատարել ենք որևէ չափանիշի ամբողջական գնահատում ըստ 10-բալանոց համակարգի: Ամբողջական կհամարենք այն գնահատականը, որը բնորոշում է այդ չափանիշը հետևյալ ուղղություններով.

- Չափորոշիչի առկայություն.
- Չափորոշիչի ինֆորմատիվությունը (որակական կամ քանակական).
- Չափորոշիչի ինֆորմատիվության հրատապությունը.
- Օգտվողի համար այդ չափորոշիչի հասանելիությունը:

Պարզ է, որ համացանցային կայքի «էջերում» այդ չափորոշիչի բացակայության դեպքում նրա գնահատականը հավասար կլինի 1 միավորի, իսկ համացանցային կայքի «ոչ պրոֆիլային» էջերում այդ չափորոշիչի առկայության դեպքում, ենթադրեք 5 միավոր: Եթե այդ չափորոշիչի վերաբերյալ տեղեկությունները հնացել են, ապա գնահատականը կկազմի 3 միավոր:

Մեր աղյուսակը կունենա հետևյալ տեսքը.

Աղյուսակի նմուշ[2]

№	Համացանցային կայքի բաժինների անվանումը	Տեղական վարչատարածքային միավորի և նրա համացանցային կայքի անվանումը						
		Մարզպետարան բ.Գավառ	Սևանի քաղաքային խորհուրդ	Ճամբարակի քաղաքային խորհուրդ	…… ……		Ծովինարի գյուղական համայնք	Վարդենիսի գյուղական համայնք
1	Նորմատիվային ակտեր (կամ նրանց հղումները), որոնք կանոնակարգում են կառավարման (ինքնակառավար-ման) գործառույթները	9	5	7	……		3	3
2	Տեղեկություն իրականացվող (իրականացված) ծրագրի մասին	10	3	4	……		4	5

[2] Ծանոթագրություն:

- Ես օգտվել եմ Գեղարքունիքի մասնաճյուղի չափանիշների ցանկից: Առաջարկում եմ դրանք ավելի կարճ արտահայտել:
- Նպատակահարմար կլիներ յուրաքանչյուր կայքի վերջնական բալային արժեքը («Ընդհանուր միավորների քանակը» տողը) ներկայացնել տոկոսային հարաբերությամբ, վերցնելով բոլոր չափանիշների ընդհանուր գնահատականի 100 տոկոսի չափով (այսինքն՝ յուրաքանչյուր չափանիշի կշիռը ապրիորի 10 միավոր):

3	Տեղեկություն իրականացված ֆինանսական աուդիտի մասին	10	5	7	……..		3	3
4	Տեղեկություն իրականացված միջոցառումների մասին	7	8	9	……		2	3
n	……	...	…	……	……..		…	…….
	Ընդհանուր միավորների քանակը	36	21	23			12	14

Մեր օրինակում, բոլոր 4 չափանիշների ընդհանուր կշիռը պետք է հավասար լինի 40-ի, իսկ իրական տոկոսային հարաբերությամբ այն կլինի.

- Մարզպետարան ք. Գավառ 100*36/40=84,0%
- Սևանի քաղաքային խորհուրդ ք. Սևան 100*21/40=52,5%
- Ճամբարակի քաղաքային խորհուրդ ք. Ճամբարակ 100*23/40=57,5%
- Ծովինարի քաղաքային խորհուրդ 100*12/40=30,0%
- Վարդենիկի քաղաքային խորհուրդ 100*14/40=34%

Վերոնշյալ մեթոդով կարող ենք գնահատել յուրաքանչյուր կայքի կշիռը տոկոսներով: Հետևաբար, կարելի է կատարել կայքերի խմբավորում ըստ յուրաքանչյուր մարզի, հաշվի առնելով, որ առաջին խմբին պատկանում են այն բոլոր կայքերը, որոնք բարձր տոկոսային գնահատական ունեն (առնվազն սկսած 70 տոկոսից), երկրորդ խմբին՝ 40 – 70 տոկոս ունեցող կայքերը, մնացածը պատկանում են երրորդ խմբին:

Սա տարբեր վարչատարածքային միավորների համացանցային կայքերի գնահատման մեթոդներից մեկն է: Եթե առաջարկեք մեկ այլ մեթոդ՝ պատրաստ եմ քննարկել:

3. Մոնիտորինգի հաջորդ ուղղությունը յուրաքանչյուր վարչատարածքային միավորի համացանցային կայքի վարման տեխնոլոգիայի ուսումնասիրությունն է (այն դեպքում, եթե չկա տիպարային տեխնոլոգիական սխեմա):

3.1. Անհրաժեշտ է յուրաքանչյուր վարչատարածքային միավորի համար, որի համացանցային կայքը հայտնվել է 1-ին և 2-րդ խմբերում, պարզել հետևյալ հարցերը.

- Կառավարման (ինքնակառավարման) մարմնի ո՞ր պաշտոնատար անձի վրա է դրված պատասխանատվությունը սեփական համացանցային կայքի էջերում տեղեկատվությունը թարմացնելու և տեղադրելու համար:
- Ի՞նչ հաճախականությամբ են թարմացվում համացանցային կայքի էջերը (ելնելով կայքից օգտվողների համար տվյալ տեղեկատվության կարևորությունից):
- Ո՞ր որոշմամբ է կարգավորվում տվյալ կայքի «ադմինիստրատորի» և կառավարման (ինքնակառավարման) համապատասխան կառուցվածքային օղակի հարաբերությունները, որոնք պատասխանատու են կայքի «էջերում» տեղ գտած տեղեկատվության իսկության և հրատապության համար:

- Արդյոք գոյություն ունի՞ տիպարային հաստիքացուցակ համացանցային կայքերի շահագործման վերաբերյալ:
- Որո՞նք են համացանցային կայքի ադմինիստրացիայի գործունեության ֆինանսավորման աղբյուրները:
- Տեղական կառավարման (ինքնակառավարման) մարմնում ո՞ր պաշտոնատար անձն է պատասխանատվություն կրում համացանցային կայքի գործունեության համար:
- Ի՞նչ հաճախականությամբ և ինչպե՞ս է համացանցային կայքի ադմինիստրացիան հաշվետու լինում համակարգի որակական գործունեության համար:
- Տեղական կառավարման (ինքնակառավարման) մարմնի ո՞ր հրահանգների, հրամանների և նորմատիվային ակտերի միջոցով է ապահովվում համացանցային կայքերի գործունեությունը:

4. Հաջորդ խնդիրը, իմ կարծիքով, որը ոչ պակաս կարևոր է, քան կայքի գործունեության փաստը՝ նրա արդյունավետության խնդիրն է:

4.1. Այս խնդիրն ուսումնասիրելու համար գոյություն ունի առնվազն երեք ուղի.

- Յուրաքանչյուր մարզի վարչատարածքային միավորի համար համացանցային կայքի առանձին մշակման և սպասարկման միջին արժեքը՝ այդ ծախսերի նպատակահարմարության հետագա փորձագիտական գնահատմամբ.
- Բավարարո՞ւմ է արդյոք կայքը պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկությանն ու հրապարակայնությանը ներկայացվող պահանջներին:
- Կառավարման (ինքնակառավարման) մարմինների գործունեության մասին հանրային իրազեկվածության բարձրացում: Որքանո՞վ է համացանցային կայքն ապահովում հանրային իրազեկվածությունը տվյալ վարչատարածքային միավորին բնութագրող սոցիալ-կենցաղային, հոգևոր-մշակութային, վարչատնտեսական և տեղեկատվական իրավիճակի վերաբերյալ:

Այդ նպատակով անհրաժեշտ է սույն վարչատարածքային միավորի բնակիչներից ձևավորել ֆոկուս խումբ, որի կազմում պետք է ընդգրկվեն սոցիալական շերտերի տարբեր ներկայացուցիչներ.

- Կրթական հիմնարկների աշխատողներ.
- Առողջապահական հիմնարկների աշխատողներ.
- Պետական ծառայողներ.
- Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ.
- Աշակերտներ և ուսանողներ.
- Գյուղացի-ֆերմերներ.
- Տնային տնտեսուհիներ և կենսաթոշակառուներ.
- Եվ այլն:

Անհրաժեշտ է կազմել մի շարք հարցաթերթիկներ, որոնք հնարավորություն կտան հաշվի առնել ինչպես սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների հատուկ կարծիքը, այնպես էլ «ընդհանուր» սպառողի կարծիքը համապատասխան համացանցային կայքի գործունեության վերաբերյալ:

Խորհուրդ է տրվում ձեր կամավորների ուժերով անցկացնել այսպես կոչված «դաշտային ակնթարթային դիտարկում», այսինքն բնակչության փողոցային հարցումներ շատ կարճ հարցաշարի միջոցով՝ «այո կամ ոչ» ռեժիմում:

Բացի այդ, ֆոկուս խմբի մասնակիցներին կամ համացանցային կայքից այլ օգտվողներին շահագրգռել առաջարկություններ ներկայացնելու բնակչության տեղեկատվական ապահովության կատարելագործման ուղղությամբ:

Սախարովի կենտրոնի յուրաքանչյուր մասնաճյուղ ունի իր համախոհները՝ ի դեմս համագործակցող ՀԿ-ների կամ քաղաքացիական հասարակության այլ կառույցների: Աշխատեք նրանց ևս ընդգրկել այս աշխատանքներում:

Հարգանքով՝

Լ.Ներսիսյան

Հ. Գ. Հուսով եմ, որ 2015 թ. օգոստոսի 20-ին մոնիտորինգի աշխատանքների ընդհանուր պլանը ներկայացնելիս իմ առաջարկությունները հաշվի կառնվեն: